

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ  
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	<i>դ</i>
2	<i>զ</i>
3	<i>ա</i>
4	<i>ա</i>
5	<i>բ</i>
6	<i>զ</i>
7	<i>ա</i>
8	<i>ա</i>
9	<i>ա</i>
10	<i>ա</i>
11	<i>ա</i>
12	<i>ա</i>
13	<i>զ</i>
14	<i>ա</i>
15	<i>դ</i>
16	<i>ա</i>
17	<i>ա</i>
18	<i>բ</i>
19	<i>դ</i>
20	<i>ա</i>
21	<i>ա</i>
22	<i>բ</i>
23	<i>ա</i>
24	<i>դ</i>
25	<i>զ</i>

## ԽՆԴԻՐ 1

### Հարց 1

Սույն խնդրում առկա փաստերի համաձայն՝ կողմերի միջև ծագել են մանրածախ առուվաճառքի պայմանագրից բխող իրավահարաբերություններ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 508-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

*«1. Մանրածախ առուվաճառքի պայմանագրով ապրանքների մանրածախ վաճառքի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող վաճառողը պարտավորվում է գնորդին հանձնել ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված ապրանք:»:*

Օրենսգրքի 509-րդ հոդվածի համաձայն.

*«Մանրածախ առուվաճառքի պայմանագիրը համարվում է պատշաճ ձևով կնքված՝ վաճառողի կողմից գնորդին՝ դրամարկղային, ապրանքային չեկ կամ ապրանքի վճարված լինելը հավաստող այլ փաստաթուղթ հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մանրածախ առուվաճառքի պայմանագրով՝ ներառյալ ստանդարտ ձևերի պայմաններով, որոնց միանում է գնորդը (հոդված 444):»:*

Արամյանը բաճկոնը գնել է ապրանքների մանրածախ վաճառքի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուրբեկտից և անձնական օգտագործման համար:

Պայմանագիրը կնքվել է պատշաճ ձևով, քանի որ Արամյանին տրամադրվել է ՀԴՄ կտրոն:

Այսպիսով, կողմերի միջև ծագել են մանրածախ առուվաճառքի պայմանագրից բխող հարաբերություններ:

Օրենսգրքի 470-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն.

*«5. Սույն պարագրաֆով նախատեսված դրույթները կիրառվում են առուվաճառքի պայմանագրի առանձին տեսակների (մանրածախ առուվաճառք, ապրանքների մատակարարում, ապրանքների մատակարարում պետական կարիքների համար, էներգամատակարարում, անշարժ գույքի վաճառք) նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրի այդ տեսակների նկատմամբ սույն օրենսգրքի կանոններով:»:*

Օրենսգրքի 485-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն.

*«1. Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել առուվաճառքի պայմանագրին համապատասխանող որակի ապրանք:*

*2. Առուվաճառքի պայմանագրում ապրանքի որակի մասին պայմանների բացակայության դեպքում վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանք, որը պիտանի է այն նպատակներին, որոնց համար այդ տեսակի ապրանքը սովորաբար օգտագործվում է:*

*Եթե պայմանագիրը կնքելիս գնորդը վաճառողին տեղեկացրել է ապրանքը ձեռք բերելու կոնկրետ նպատակների մասին, վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել այդ նպատակներին համապատասխան օգտագործելու համար պիտանի ապրանք:»:*

Օրենսգրքի 493-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն.

«1. Գնորդն իրավունք ունի ապրանքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ պայմանով, որ դրանք հայտնաբերված լինեն սույն հոդվածով սահմանված ժամկետներում, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ առուվաճառքի պայմանագրով:

2. Եթե ապրանքի նկատմամբ սահմանված չէ երաշխիքային կամ պիտանիության ժամկետ, գնորդը կարող է ապրանքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել պայմանով, որ վաճառված ապրանքի թերությունները հայտնաբերված լինեն ապրանքը գնորդին հանձնելուց հետո ողջամիտ ժամկետում՝ ոչ պակաս, քան երկու տարվա ընթացքում, կամ ավելի երկար ժամկետում, եթե այդպիսի ժամկետ սահմանված է օրենքով կամ առուվաճառքի պայմանագրով: Փոխադրման կամ փոստով առաքման ենթակա ապրանքի թերությունների հայտնաբերման ժամկետը հաշվարկվում է ապրանքը նշանակման վայրը հասնելու օրվանից:»:

Օրենսգրքի 517-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Գնորդն իրավունք ունի պատշաճ որակի ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել, գնված ապրանքն այն գնելու կամ վաճառողի հայտարարած այլ վայրերում վերադարձնելու կամ փոխարինելու այլ չափի, ձևի, գույնի կամ համանման կոմպլեկտայնության ապրանքով՝ գնի տարբերության դեպքում անհրաժեշտ վերահաշվարկ կատարելով վաճառողի հետ:»:

Օրենսգրքի 518-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Գնորդը, ում վաճառվել է անպատշաճ որակի ապրանք, եթե դրա թերությունների մասին վաճառողը նախապայման չի սահմանել, իր ընտրությամբ իրավունք ունի պահանջել՝

1) անորակ ապրանքը փոխարինելու պատշաճ որակի ապրանքով.

2) համաչափորեն իջեցնելու ապրանքի գինը.

3) անհապաղ և անհատույց վերացնելու ապրանքի թերությունները.

4) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու ծախսերը:

Գնորդն իրավունք ունի պահանջել՝ փոխարինելու տեխնիկապես բարդ կամ թանկարժեք ապրանքը միայն դրա որակին առաջադրվող պահանջների էական խախտման դեպքում (491 հոդվածի 2-րդ կետ):»:

Այսպիսով, գնորդի կողմից գնված ապրանքը վերադարձնելու համար գործում է երկու իրավական կառուցակարգ՝ պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը վերադարձնելու և ոչ պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը վերադարձնելու համար:

Սույն խնդրում գործ ունենք ոչ պատշաճ որակի ոչ պարենային ապրանքի վերադարձի հետ, որի դեպքում Օրենսգրքով սահմանված 14-օրյա ժամկետը նշանակություն չունի:

Արամյանը թերությունները հայտնաբերել է Օրենսգրքով սահմանված ժամկետներում, հետևաբար կարող էր ներկայացնել պահանջներ վաճառողին:

Միաժամանակ, Արամյանը կարող էր պահանջել փոխարինել անպատշաճ որակի ապրանքը պատշաճ որակի ապրանքով և միայն վաճառողի կողմից այդ պահանջը կատարելուց հրաժարվելու կամ այդ պահանջը կատարելու անհնարինության դեպքում պահանջել վերադարձնել ապրանքի համար վճարած գումարը:

Բացի այդ, Արամյանը վնասների հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք չուներ, քանի որ նման դրույթ Օրենսգրքի 518-րդ հոդվածով սահմանված չէ:

## **Հարց 2.**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ Օրենսգրքի 470-րդ և 474-րդ հոդվածներին:

### **Հոդված 470. Առուվաճառքի պայմանագիր**

1. Առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը):

2. Սույն պարագրաֆով նախատեսված դրույթները կիրառվում են արժեթղթերի և արժույթային արժեքների առուվաճառքի նկատմամբ, եթե դրանց առուվաճառքի համար հատուկ կանոնները սահմանված չեն օրենքով:

3. Սույն օրենսգրքով կամ այլ օրենքով նախատեսված դեպքերում առանձին տեսակների ապրանքներ գնելու ու վաճառելու առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և այլ իրավական ակտերով:

4. Սույն պարագրաֆում նախատեսված դրույթները կիրառվում են գույքային իրավունքների վաճառքի նկատմամբ, եթե այլ բան չի բխում այդ իրավունքների բովանդակությունից կամ բնույթից:

5. Սույն պարագրաֆով նախատեսված դրույթները կիրառվում են առուվաճառքի պայմանագրի առանձին տեսակների (մանրածախ առուվաճառք, ապրանքների մատակարարում, ապրանքների մատակարարում պետական կարիքների համար, էներգամատակարարում, անշարժ գույքի վաճառք) նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրի այդ տեսակների նկատմամբ սույն օրենսգրքի կանոններով:

### **Հոդված 474. Վաճառողի՝ ապրանք հանձնելու պարտականությունը կատարելու պահը**

1. Եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով, ապրանքը գնորդին հանձնելու վաճառողի պարտականությունը համարվում է կատարված այն պահին, երբ՝

1) ապրանքը հանձնվում է գնորդին կամ նրա նշած անձին, եթե պայմանագրով նախատեսված է ապրանքը տեղ հասցնելու վաճառողի պարտականությունը.

2) ապրանքը հանձնվում է գնորդի տնօրինությանը, եթե այն պետք է գնորդին կամ նրա նշած անձին հանձնվի ապրանքի գտնվելու վայրում: Ապրանքը համարվում է գնորդի տնօրինությանը հանձնված, եթե պայմանագրով նախատեսված ժամկետում, պատշաճ վայրում, ապրանքը պատրաստ է հանձնելու, և գնորդը, պայմանագրի պայմանների համաձայն, ծանուցված է հանձնելու համար ապրանքը պատրաստ լինելու մասին: Ապրանքը չի համարվում հանձնելու համար պատրաստ, եթե այն պիտակավորման կամ այլ եղանակով նույնացված չէ պայմանագրի նպատակների համար:

2. Այն դեպքերում, երբ առուվաճառքի պայմանագրից չի բխում ապրանքը տեղ հասցնելու կամ գնորդին դրա գտնվելու վայրում հանձնելու վաճառողի պարտականությունը, այն համարվում է կատարված ապրանքը գնորդին հասցնելու համար փոխադրողին կամ կապի կազմակերպությանը հանձնելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

## ԽՆԴԻՐ 2

### Հարց 1

Սույն խնդրի փաստերի համաձայն՝ կողմերի միջև ծագել են փոխառության պայմանագրից բխող իրավահարաբերություններ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

*«1. Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միննույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:*

*Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:»*

Օրենսգրքի 878-րդ հոդվածի համաձայն.

*«1. Փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր:*

*2. Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:*

*3. Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է:»*

Խնդրի փաստերի համաձայն՝ Սմբատյանը Աբելյանին հանձնել է դրամական միջոցներ, իսկ Աբելյանը պարտավորվել է վերադարձնել նույն չափի գումար և վճարել տոկոսներ:

Ընդ որում, հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ փոխառության պայմանագիրը կնքվել է 2021 թվականի օգոստոսի 18-ին, այնուամենայնիվ այդ պայմանագիրը պետք է կնքված համարել գումարը հանձնելու պահից, այսինքն՝ պայմանագիրը պետք է կնքված համարել 2021 թվականի սեպտեմբերի 10-ին:

Կողմերը պահպանել են փոխառության պայմանագրի կնքման ձևը, քանի որ ի հավաստում փոխառության պայմանագրի Աբելյանը Սմբատյանին տվել է ստացական:

Օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

*«1. Փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:»*

Օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

*«1. Փոխատուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:*

*Այն դեպքում, երբ վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցայահանջ, փոխառության գումարը փոխատուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի*

պահանջը ներկայացնելու օրվանից երեսնօրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:»:

Օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխառուին վերադարձնելու օրը:

Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առջինն է:»:

Օրենսգրքի 882-րդ հոդվածի համաձայն.

«1. Փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխառուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով:

2. Վկաների ցուցմունքների միջոցով սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերով փոխառության պայմանագրի վիճարկում չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիրը կնքվել է խաբեության, բռնության, սպառնալիքի, փոխառուի ներկայացուցչի և փոխառուի չարամիտ համաձայնությամբ կամ այլ ծանր հանգամանքների բերումով:

3. Եթե փոխառության պայմանագիրը սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերով վիճարկելիս պարզվում է, որ փոխառուն դրամը կամ այլ գույքն իրականում չի ստացել փոխառուից, փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված: Եթե դրամը կամ այլ գույքը փոխառուն փոխառուից ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով, պայմանագիրը կնքված է համարվում ստացված քանակի գումարի կամ գույքի չափով:»:

Օրենսգրքի 426-րդ հոդվածի համաձայն.

«Պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով: Հաշվանցի համար բավական է մեկ կողմի հայտարարությունը:»:

Օրենսգրքի 427-րդ հոդվածի համաձայն.

«Պահանջների հաշվանց չի թույլատրվում, եթե՝

1) մյուս կողմի դիմումով պահանջի նկատմամբ ենթակա է կիրառման հայցային վաղեմության ժամկետ և այդ ժամկետը լրացել է.

2) դրանք վերաբերում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը.

3) դրանք վերաբերում են ալիմենտի բռնագանձմանը:

Պահանջների հաշվանց չի թույլատրվում նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:»:

Խնդրի փաստերի համաձայն՝ փոխառության պայմանագիրը պետք է կնքված համարել 2021 թվականի սեպտեմբերի 10-ից, որից էլ պետք է հաշվել փոխառուի կողմից գումարը վերադարձնելու ժամկետը:

Խնդրի փաստերի համաձայն՝ 2021 թվականի սեպտեմբերի 10-ի ստացականում նշված չէ գումարը վերադարձնելու ժամկետը, սակայն, քանի որ կողմերի միջև 2021 թվականի օգոստոսի 18-ին կնքվել է փոխառության պայմանագիր անունով փաստաթուղթ, որտեղ երկու կողմերն էլ համաձայնել են գումարի վերադարձի ժամկետ սահմանել երեք ամիսը, ուստի փոխառուի կողմից գումարը վերադարձնելու ժամկետ պետք է համարել 2021 թվականի սեպտեմբերի 10-ից հաշված երեք ամիսը<sup>1</sup>:

Փոխառության պայմանագրով սահմանվել են տոկոսներ, որոնք սակայն չեն կարող կիրառվել ծագած փոխառության հարաբերությունների նկատմամբ, քանի որ գերազանցում են Օրենսգրքով սահմանված չափը, բացի այդ՝ ստացականում նշում չկա այդ տոկոսների մասին, իսկ Օրենսգրքի 879-րդ հոդվածը պարտավորեցնում է կողմերին պայմանագրով հստակ սահմանել տոկոսների չափը և հաշվարկման կարգը:

Իհարկե, սույն դեպքում կարող ենք նաև անալոգիա կիրառել փոխառության գումարի վերադարձի օրինակով և պնդել, որ փոխառության գումարին պետք է հաշվարկվեն տոկոսներ:

Այնուամենայնիվ, քանի որ այդ տոկոսների չափը գերազանցում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրույքաչափի կրկնապատիկը, ուստի այդ տոկոսները ենթակա չեն լինի վճարման:

Հարկ է նշել նաև, որ սույն դեպքում չենք կարող կիրառել ՀՀ ԿԲ կողմից սահմանված տոկոսադրույքի առավելագույն չափը, քանի որ կողմերի կայացրած համաձայնությունից հնարավոր չէ նման եզրահանգման գալ:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ տոկոսների վերաբերյալ պայմանը համաձայնեցված չէ և փոխառության պայմանագիրը պետք է համարել անհատույց պայմանագիր:

Խնդրի փաստերի համաձայն՝ փոխառուն վիճարկում է փոխառության պայմանագիրն անփողության հիմքով, ընդ որում՝ նշելով, որ 2 000 000 դրամ գումարը նշվել է սպառնալիքի ազդեցության ներքո:

Նման դեպքում, փոխառուն կարող է իր փաստարկներն ապացուցել վկաների ցուցմունքների միջոցով:

Եթե դատարանը վկաների ցուցմունքները համարի արժանահավատ, ապա փոխառության պայմանագիրը կհամարի կնքված 500 000 դրամի չափով:

Հաշվանց կատարելու մասով փոխառուն բաց է թողել այդ պահանջով դատարան դիմելու համար սահմանված երեք տարվա հայցային վաղեմության ժամկետը, որի արդյունքում հաշվանց չի թույլատրվի, եթե փոխառուն հայտարարի, որի փոխառուի պահանջի նկատմամբ կիրառելի է հայցային վաղեմության ժամկետ:

## **Հարց 2**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ Օրենսգրքի 881-րդ և 883-885-րդ հոդվածներին:

### ***Հոդված 883. Փոխառուի պարտավորության ապահովման կորստի հետևանքները***

*Փոխառուի կողմից փոխառության պայմանագրով նախատեսված փոխառության գումարը վերադարձնելու պարտավորության ապահովման պարտականությունները չկատարելու, ինչպես նաև նման ապահովման կորստի կամ դրա պայմանների վատթարացման այնպիսի*

---

<sup>1</sup> Եթե ունկնդիրը ընտրի այ տարբերակ և գա եզրահանգման, որ գումարի վերադարձման ժամկետ նշված չէ և պետք է առաջնորդվել Օրենսգրքի 880-րդ հոդվածով, ապա նման տեսակետը պատշաճ հիմնավորելու դեպքում այդ լուծման տարբերակը պետք է համարել ճիշտ:

հանգամանքներում, որոնց համար փոխատուն պատասխանատվություն չի կրում, վերջինս իրավունք ունի փոխառուից պահանջել վաղաժամկետ վերադարձնելու փոխառության գումարը և վճարելու հասանելիք տոկոսները, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

**Հոդված 884. Նպատակային փոխառություն**

1. Եթե փոխառության պայմանագիրը կնքված է փոխառուի կողմից ստացված միջոցները որոշակի նպատակների համար օգտագործելու պայմանով (նպատակային փոխառություն), փոխառուն պարտավոր է ապահովել փոխառության գումարի նպատակային օգտագործման նկատմամբ փոխատուի վերահսկողության հնարավորությունը:

2. Փոխառուի կողմից փոխառության գումարի նպատակային օգտագործման մասին փոխառության պայմանագրի պայմանը չկատարելու, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունները խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի փոխառուից պահանջել վաղաժամկետ վերադարձնելու փոխառության գումարը և վճարելու հասանելիք տոկոսները, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

**Հոդված 885. Պետական փոխառության պայմանագիր**

1. Պետական փոխառության պայմանագրով՝ որպես փոխառու հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը, իսկ փոխատու՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը:

2. Պետական փոխառությունները կամավոր են:

3. Պետական փոխառության պայմանագիրը կնքվում է փոխառուի թողարկած պետական այն պարտատոմսերը կամ պետական այլ արժեթղթերը փոխատուի կողմից ձեռք բերելու միջոցով, որոնք հավաստում են դրամական միջոցները, այլ գույքը, սահմանված տոկոսները կամ այլ գույքային իրավունքները փոխառության թողարկման պայմաններով նախատեսված ժամկետներում փոխառուից ստանալու փոխատուի իրավունքը:

4. Շրջանառության մեջ թողարկված փոխառության պայմանների փոփոխություն չի թույլատրվում:

5. Պետական փոխառության պայմանագրի մասին կանոնները համապատասխանաբար կիրառվում են համայնքների թողարկած փոխառությունների նկատմամբ:

**ԽՆԴԻՐ 3**

**Հարց 1**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերին, կարգին, ինչպես նաև կարգապահական տույժեր կիրառելու ընթացակարգին:

Այսպես, խնդրի փաստերի համաձայն Աշխատողի և Գործատուի միջև ծագել են աշխատանքային հարաբերություններ:

Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:»:

Աշխատողի անմիջական պարտականությունները ներառում են հաճախորդներին խորհրդատվություն տրամադրել առավել օպտիմալ փաթեթներ ընտրելու հարցում և գանձել վճարման ենթակա գումարները՝ դրանք մուտքագրելով դրամարկո:

Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է, ի շարս այլնի, նաև գործատուի նախաձեռնությամբ:

Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը (...) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

Օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

Այսինքն, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերից է համարվում նաև աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը, որն, ի թիվս այլնի, դրսևորվել է նաև գործատուի վերաբերյալ գաղտնի տեղեկատվություն հրապարակելու կամ մրցակցին հայտնի դարձնելու միջոցով:

Օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն.

*«Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու:»:*

Օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ (...) Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

Այսպիսով, կարգապահական խախտման դեպքում որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել նաև վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծումը:

Ընդ որում, վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողին ծանուցելու պարտականությունը գործատուն չունի:

Միաժամանակ, Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

*«1. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի*

*ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության»:*

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն.

*«1. Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:*

*2. Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: Եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան մեկ տարի»:*

Սույն խնդրի փաստերի համաձայն՝ կարգապահական խախտումը կատարվել է 2017 թվականից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 12-ը և հայտնաբերվել է 15.09.2021 թվականին:

Աշխատողը արձակուրդում է գտնվել 13.09.2021 թվականի մինչև 13.10.2021 թվականը, իսկ 14.10.2021 թվականից մինչև 20.10.2021 թվականը չվճարվող արձակուրդում:

Կադրերի բաժինը 12.10.2021 թվականին աշխատողին ուղարկել է դեպքի մասին գրավոր բացատրություն ներկայացնելու վերաբերյալ գրություն՝ բացատրություն ներկայացնելու համար սահմանելով 3 աշխատանքային օր ժամկետ:

Աշխատողը 14.10.2021 թվականին ստանալով գրությունը՝ որևէ ձևով չի արձագանքում դրան:

21.10.2021 թվականին Գործատուի տնօրենն ընդունել է աշխատողին աշխատանքից ազատելու մասին հրաման:

Այսպիսով, վկայակոչված իրավական նորմերի և խնդրի փաստերի համադրման արդյունքում կարող են գալ հետևյալ եզրահանգմանը:

Գործատուն աշխատողին ազատել է աշխատանքից վերջինիս արձակուրդից վերադառնալուց հետո, այսինքն բացակայել է աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված արգելքը:

Աշխատանքային պայմանագրի լուծման համար առկա են եղել անհրաժեշտ հիմքերը, իսկ գործատուն պահպանել է կարգապահական վարույթի ընթացակարգը, մասնավորապես գրավոր բացատրագիր է պահանջել աշխատողից:

Քանի որ Օրենսգիրքը սահմանում է միայն աշխատանքային պայմանագրի լուծման արգելք աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, այլ ոչ թե ընդհանրապես կարգապահական վարույթ հարուցելու արգելք, ապա այդ մասով Ընկերության գործողությունները ևս իրավաչափ են:

Կարգապահական տույժը կիրառվել է 21.10.2021 թվականին, իսկ խախտումը կրել է տևական բնույթ և դրա վերջին կատարման օրը 13.09.2021 թվականն է (եթե խախտումը չբացահայտվեր, ապա կշարունակվեր նաև ապագայում), այսինքն պահպանվել է նաև 1-ամյա ժամկետի պահանջը:

Հարկ է նշել, որ սույն դեպքում էական չէ 2017-2020 թվականի օգոստոս ամիսների ընթացքում կատարված խախտումների համար վաղեմության ժամկետն անցած լինելու հանգամանքը, քանի որ խախտումը կրել է տևական բնույթ և դրա մեկ անգամյա դրսևորումն էլ բավարար է աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու համար:

## Հարց 2.

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ և 114-րդ հոդվածներով սահմանված կարգավորումներին:

**Հոդված  
113.**

### **Աշխատանքային պայմանագրի լուծույթը գործատուի նախաձեռնությամբ**

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում.

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).

8) աշխատողի կողմից ռեզից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեկերպործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում.

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.

10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

11) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսուհինգ տարին լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով.

12) օտարերկրացու կացության կարգավիճակն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում.

13) սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետևանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին

երեք ամսվա ընթացքում ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով՝ 115-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված ժամկետներում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

#### **Հոդված 114. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը**

1. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝

1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի.

2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

2.2) երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նախատեսված դեպքերի.

3) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով.

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի.

5) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի.

6) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում, եթե մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողը չի ներկայացել աշխատանքի:

2. Եթե աշխատողը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակահատվածների ավարտից հետո չի ներկայանում աշխատանքի, ապա գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը:

3. Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) հետևանքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս չեն կիրառվում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները:

4. Աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել՝

1) արհեստակցական միությանը անդամակցելը կամ ոչ աշխատանքային ժամերին, իսկ գործատուի համաձայնությամբ նաև աշխատանքային ժամերին արհեստակցական միության գործունեությանը մասնակցելը.

2) երբևէ աշխատողների ներկայացուցիչ հանդիսանալը.

3) օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի կամ կոլեկտիվ պայմանագրի խախտման համար գործատուին պահանջներ ներկայացնելը.

4) սերը, ռասան, ազգությունը, լեզուն, ծագումը, քաղաքացիությունը, սոցիալական դրությունը, դավանանքը, ամուսնական վիճակը և ընտանեկան դրությունը, համոզմունքները կամ տեսակետները, կուսակցություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելը.

5) տարիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

## ԽՆԴԻԴ 4

### Հարց 1

Սույն խնդրի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի գնման նախապատվության իրավունքին, ինչպես նաև շահագրավածությամբ գործարքների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում խոշոր գործարքների կնքման կարգին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

*«3. Ընկերությունը համարվում է փակ, եթե Ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա բաժնետերերի (այդ թվում՝ հիմնադիրների) կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Փակ Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:*

*Փակ Ընկերությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 բաժնետեր: Եթե բաժնետերերի թիվը 49-ից ավելի է դարձել, ապա Ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի կամ համապատասխանաբար կրճատի իր բաժնետերերի քանակը: Հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման դատական կարգով:*

*Փակ Ընկերության բաժնետերն ունի այդ Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե Ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանից հրաժարվելու մասին որոշումը կայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ժողով), եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:*

*Փակ Ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի իրականացման կարգը և ժամկետները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ: Նախապատվության իրավունքի ժամկետը չի կարող բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից 30 օրից պակաս և 60 օրից ավելի լինել:»:*

Խնդրի փաստերի համաձայն՝ Բագրատյանը 14.10.2021 թվականին ծանուցել է Ընկերությանը և մյուս բաժնետերերին, որ ցանկանում է օտարել իրեն պատկանող ընդհանուր առմամբ 25 % բաժնետոմս՝ 12 000 000 ընդհանուր արժեքով, սակայն բաժնետերերը և Ընկերությունը որևէ ձևով չեն արձագանքում Բագրատյանի առաջարկին:

Նշվածից բխում է, որ Ընկերությունը և բաժնետերերը հրաժարվել են իրենց գնման նախապատվության իրավունքից:

Միաժամանակ, Բագրատյանը 20.02.2022 թվականին իր բաժնետոմսերից 10 %-ն օտարել է 2 000 000 դրամով, 14.03.2022 թվականին Բագրատյանը իր բաժնետոմսերից 12 %-ը նվիրել է իր որդուն, իսկ 13 %-ը փոխանակել է այլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում «Կանկուր» ՍՊԸ-ին պատկանող 25 % բաժնեմասերի հետ:

Փաստորեն, Բագրատյանը երրորդ անձանց բաժնետոմսերն օտարել է Ընկերությանը և բաժնետերերին առաջարկվածից տարբերվող եղանակներով:

Հարկ է նշել նաև, որ Բագրատյանն իրացրել է ավելի շատ բաժնետոմսեր, քան առաջարկել է բաժնետերերին:

Նման պայմաններում, Բագրատյանը չնայած իր բաժնետոմսերը վաճառելու մտադրության մասին հայտնել է Ընկերությանը և բաժնետերերին, սակայն, փաստացի, խախտել է նրանց գնման նախապատվության իրավունքը:

Միաժամանակ, Բագրատյանը այդ խախտումը թույլ է տվել միայն բաժնետոմսերի 10 տոկոսի մասով, իսկ մնացած 25 տոկոսի մասով վերջինս Ընկերության և բաժնետերերի գնման նախապատվության իրավունքն ապահովելու պարտականություն չուներ:

Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ Ընկերությունը և բաժնետերերն ունեն գնման նախապատվության իրավունք միայն այն դեպքում, երբ բաժնետերը վաճառում է իր բաժնետոմսերը:

Սույն խնդրի փաստերի համաձայն՝ 14.03.2022 թվականին Բագրատյանը իր բաժնետոմսերից 12 %-ը նվիրում է իր որդուն, իսկ 13 %-ը փոխանակում է այլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում «Կանկուր» ՍՊԸ-ին պատկանող 25 % բաժնեմասերի հետ:

Այսինքն՝ Բագրատյանը նշված բաժնետոմսերն օտարել է նվիրատվության և փոխանակման գործարքների միջոցով, որոնց դեպքում վաճառք տեղի չի ունենում:

Այսպիսով, Բագրատյանը պետք է ապահովեր Ընկերության և բաժնետերերի գնման նախապատվության իրավունքը իր կողմից վաճառված 10 տոկոս բաժնետոմսերի մասով:

Միաժամանակ, Ընկերության կանոնադրությամբ սահմանված վեցամսյա ժամկետը հակասում է օրենքով սահմանված առավելագույն ժամկետին և Բագրատյանն, ըստ էության, առաջին ծանուցումից հետո պետք է սպասեր առավելագույնը 60 օր:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի համաձայն.

*«1. Ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝*

*ա) հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.*

*բ) գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է:*

*2. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված են համարվում Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), Ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:»:*

Սույն հոդվածի իմաստով շահագրավածությամբ գործարք պետք է համարել Ընկերության մասնակցությամբ գործարքները, իսկ Բագրատյանի և իր որդուն միջև նվիրատվության

պայմանագրին Ընկերությունը որևէ ձևով չի մասնակցել, հետևաբար շահագրավածությամբ գործարքների կնքման կարգը այդ հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ:

Բազրատյանի և «Կանկուր» ՍՊԸ-ի միջև կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջ է ներկայացրել նաև «Կանկուր» ՍՊԸ-ի բաժնետեր Հովեյանը՝ պնդելով, որ այդ գործարքը «Կանկուր» ՍՊԸ-ի համար հանդիսացել է խոշոր գործարք և չի ստացել ընդհանուր ժողովի հավանությունը:

«Կանկուր» ՍՊԸ- տնօրենը առարկելով հայցի դեմ՝ նշել է, որ գործարքը ստացել է ընկերության տնօրենների խորհրդի հավանությունը, ինչը թույլատրված է ընկերության կանոնադրությամբ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«1. Խոշոր է հանդիսանում այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքի 25 տոկոսից ավելին, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ խոշոր գործարքի այլ չափ: Խոշոր չեն ճանաչվում այն գործարքները, որոնք կատարվում են ընկերության առօրյա տնտեսական գործունեության ընթացքում»:*

Այսպիսով, խոշոր գործարք պետք է համարել այն գործարքները, որոնք կնքվում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և այլ անձանց միջև:

Սույն դեպքում «Կանկուր» ՍՊԸ-ի ակտիվների արժեքի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն, հետևաբար հարցը հնարավոր է լուծել երկու տարբերակով:

Առաջին տարբերակ. «Կանկուր» ՍՊԸ-ի կողմից օտարված 25 տոկոս բաժնեմասերը և ձեռքբերված 13 տոկոս բաժնետոմսերը չեն գերազանցում ընկերության զուտ ակտիվների արժեքի 25 տոկոսը և հետևաբար չեն համարվում խոշոր գործարք:

Երկրորդ տարբերակ. «Կանկուր» ՍՊԸ-ի կողմից օտարված 25 տոկոս բաժնեմասերը և ձեռքբերված 13 տոկոս բաժնետոմսերը գերազանցում են ընկերության զուտ ակտիվների արժեքի 25 տոկոսը, հետևաբար համարվում են խոշոր գործարք և պետք է ստանային ժողովի համաձայնությունը: Միաժամանակ, եթե «Կանկուր» ՍՊԸ-ի պնդումները հիմնավոր են, ապա խոշոր գործարք կնքելու մասին որոշումը կարող էր կայացնել նաև ընկերության տնօրենների խորհուրդը:

## **Հարց 2.**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-61-րդ և 62-65-րդ հոդվածներին, ինչպես «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածին:

### **«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք**

**Հոդված 60. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքները**

*1. Խոշոր են համարվում՝*

ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը:

բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Ընկերության հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի (բացառությամբ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի) տեղաբաշխումը, որը կազմում է Ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 50 և ավելի տոկոսը:

2. Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

**Հոդված 61. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը**

1. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

2. Սույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջներն Ընկերության կողմից չպահպանվելու մասին:

**Հոդված 62. Ընկերության գործարքներում շահագրգռվածությունը**

1. Ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝

ա) հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ:

բ) գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է:

2. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված են համարվում Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), Ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

**Հոդված 63. Ընկերության գործարքներում շահագրգռվածության վերաբերյալ տեղեկատվությունը**

1. Ընկերության փոխկապակցված անձինք պարտավոր են Ընկերության գործադիր մարմնին կամ կանոնադրությամբ սահմանված այլ մարմնի տրամադրել տեղեկատվություն՝

ա) այն մասին, որ իրենք հանդիսանում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ՝ բացահայտելով փոխկապակցվածությանն առնչվող հանգամանքները՝ մինչև գործարքը կնքելը.

բ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ՝ սույն կետով նախատեսված տեղեկատվությունն իրենց հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Շահագրգռվածության առկայությամբ Ընկերության ցանկացած գործարք ներկայացվում է Ընկերության տարեկան հաշվետվության մեջ՝ բացահայտելով ամբողջական և համապարփակ տեղեկատվություն գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ և կցելով անկախ գնահատողի եզրակացությունը շուկայական արժեքին գործարքի համապատասխանության վերաբերյալ:

3. Ընկերության գործադիր մարմինը կամ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմին պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների հիման վրա վարել Ընկերության փոխկապակցված անձանց ռեեստր:

**Հոդված 64. Շահագրգռվածության առկայության դեպքում ընկերության գործարքների կնքման կարգը**

1. Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

2. 500 և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող, խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ:

Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ՝

- գործարքը կնքելու հետևանքով Ընկերության կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Ընկերության կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ՝

- գործարքը կնքելու հետևանքով Ընկերության ձեռք բերված գույքի, ստացված ծառայության կամ Ընկերության համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

3. Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից, եթե՝

ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին:

բ) գործարքը կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է Ընկերության արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Շահագրգռվածություն ունեցող բաժնետերերն իրավունք չունի ներկա լինելու գործարքը կնքելու մասին որոշման քննարկմանը կամ քվեարկությանը, իսկ նրան պատկանող բաժնետոմսերը հաշվի չեն առնվում ժողովի քվորումի հաշվարկման ժամանակ: Գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ:

Ընկերության կանոնադրությամբ սույն մասով նախատեսված որոշման ընդունման համար կարող է սահմանվել ձայների առավել մեծ քանակ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հատկանիշներին համապատասխանող գործարքը կարող է կնքվել խորհրդի որոշմամբ, եթե այդ գործարքն Ընկերությանը տրամադրվող փոխառություն է:

5. Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով:

6. Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, մինևսույն ժամանակ Ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի VIII գլխի դրույթները:

## **Հոդված 65. Շահագրգռվածության առկայությամբ գործարքների հետևանքները**

1. Գործարքում շահագրգիռ ճանաչված անձն Ընկերության առջև պատասխանատվություն է կրում սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքի հետևանքով Ընկերությանը պատճառված վնասների չափով:

Գործարքում շահագրգիռ ճանաչված անձը պարտավոր է նաև Ընկերությանը վերադարձնել ցանկացած շահույթ, որ ստացել է սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքներից:

Սույն օրենքի 63-րդ հոդվածի պահանջները խախտող անձինք պատասխանատվություն են կրում խախտման հետևանքով Ընկերությանը կամ այլ անձանց պատճառված վնասի համար:

2. Եթե պատասխանատվության ենթակա է մի քանի անձ, ապա նրանք Ընկերության և այլ շահագրգիռ անձանց առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

3. Շահագրգռվածության առկայության դեպքում Ընկերության գործարքների կնքման վերաբերյալ սույն գլխի պահանջները չեն կիրառվում, եթե՝

ա) բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը:

բ) իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը:

գ) տեղաբաշխված բաժնետոմսերն Ընկերության կողմից ձեռք բերելու դեպքում, եթե տվյալ տեսակի կամ դասի բաժնետոմսերի բոլոր սեփականատերերն ունեն հավասար իրավունք՝ համամասնորեն վաճառելու իրենց պատկանող տվյալ տեսակի կամ դասի բաժնետոմսերը:

4. Եթե Ընկերության` ձայնի իրավունք սովորաբար բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա շահագրգռվածության առկայության դեպքում սույն գլխի պահանջները չեն կիրառվում:

5. Փակ Ընկերության (որի ձայնի իրավունք սովորաբար բաժնետոմսերի սեփականատերերի քանակը չի գերազանցում 10-ը) կանոնադրությունը կարող է նախատեսել դրույթներ` սույն գլխի նորմերի պահանջները մասնակի կամ ամբողջությամբ չկիրառելու մասին:

6. Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն պահանջելու`

- անվավեր ճանաչել սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը,

- գործարքում շահագրգիռ ճանաչված անձանց կողմից գործարքի հետևանքով պատճառված վնասի հատուցում,

- գործարքից ստացված շահույթի վերադարձ Ընկերությանը:

7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքի հաստատումը գործարքում խախտում կատարած անձին չի ազատում սույն օրենքի խախտմամբ կնքված գործարքի հետևանքով Ընկերությանը կամ բաժնետերերին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից:

#### **«Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք**

#### **Հոդված 48. Խոշոր գործարքները**

1. Խոշոր է հանդիսանում այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ ընկերության գույտ ակտիվների արժեքի 25 տոկոսից ավելին, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ խոշոր գործարքի այլ չափ: Խոշոր չեն ճանաչվում այն գործարքները, որոնք կատարվում են ընկերության առօրյա տնտեսական գործունեության ընթացքում:

2. Խոշոր գործարք կատարելու մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից:

3. Ընկերության խորհրդի ստեղծման դեպքում ընկերության կողմից իր գույտ ակտիվների արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակի կամ անուղղակի գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարման հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումն ընկերության կանոնադրությամբ կարող է վերապահվել ընկերության խորհրդի իրավասությանը:

4. Սույն հոդվածի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է ճանաչվել անվավեր դատարանի վճռով:

5. Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ խոշոր գործարքներ կատարելու համար չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ ընկերության խորհրդի որոշումը:

6. Սույն հոդվածը չի կիրառվում մեկ մասնակցից բաղկացած ընկերությունների նկատմամբ, որն իրականացնում է սլյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները: